

փաքող, գործէ հասկցող, մարդ ճանչցող մահատե-
սիներու (= Ամիրաներու) համերաշխութիւնն ու
համաձայնութիւնը՝ իրարու հետ փոշոն եւ եր-
կու Աթոռներուն պատրիարքութիւնը քննեցնի
իրարմէ:

Գրիգոր, Մշու Ս. Կարապետին Առաջնորդը,
բնաւ լուր չունէր Պոլսոյ մէջ անցած դարձածէն:
Գաղափարակցութեան այսպիսի հանդիսաւոր, այս-
պիսի օրինակելի արտայայտութիւն շատ քիչ կը
պատահի մանաւանդ եկեղեցականներու կեանքին
մէջ: Կոլոտ իր «Երջանիկ հօր», էութիւնը կը զգար.
հետեւապէս վստահաբար պատրիարք ընտրեց եւ
ընտրել տուաւ Շիրվանցի Գրիգոր Վարդապետը,
երբ սա իր վանքին բարեկարգութեան նուիրուած
էր արդէն:

ԿՈՒՈՏԻ ՊԱՏՐԻԱՐԿՈՒԹԻՒՆԸ

Կոլոտի Երուսաղէմէն վերադարձը եւ մինչեւ
իր Պոլսոյ պատրիարքական աթոռին վրայ բազմիւր
ստանձանաւ բեղմնաւոր ժամանակամիջոց մը
կ'ընդգրկէ եւ դարագլուխ մը կը կազմէ ոչ միայն
Երուսաղէմի, այլ նաեւ Պոլսոյ պատրիարքութեան
տարեգրութիւններուն մէջ: Այս դարագլուխը
կազմելու համար անհուն ջանք, վաստակ, դրամ
գործածուեցաւ. Կոլոտը խրախուսողներն եւ անոր
խոստում տուողները գործնականապէս ցոյց տուին
իրենց նախանձախնդրութիւնը եկեղեցւոյ բարե-
կարգութեան համար: Գործ սիրող, գործէ հասկը-
ցողներ հեռի չկեցան, հեռուէն չբննադատեցին:

Աղգովին որոշուած այս բոլոր կարգադրու-
թիւնները կայսերական հաճութեամբ նուիրա-
գործել տալու եւ գործադրելու համար Կոլոտ եւ
իր մահատեսիները Ագրիանուպոլիս գացին, ուր
Սուլթան Մահմուտ Ա. Ղալէ կայսրը (1730 — 1754)
զատ զատ ֆէրմաններով վաւերացուց Պոլսոյ եւ
Երուսաղէմի նորընտիր պատրիարքներուն պաշտօնը: